

Թեամբ, որպէս զի առաջիկայ ածուրդներին մինչեւ չը համարձակվին կատուներին հետ խաղեր խաղալ... շատ զգուշ լինեն...

Եւ տեղին է. վերջին ածուրդներին ժամանակ զանազան բարձրանալով հասել են 8—12 կողմէի, այն ինչ այժմ նաւթը ծախվում է 8 կ., հաշվելով եւ այն, որ ամեն մի պուշ նաւթը արհեստագործին նստում է մօտաւորապէս 3—4 կ., շատ պարզ է, որ միանգամայն անապահ են: Իսկ այդպիսի պայմաններում սուսկի պէս բուսեցող մատաղ ֆերմաները պէտք է դնու չը ծաղկած թառամեն...

Սակայն, բարեբաղդաբար, ենթադրվում է, որ գնները այդ անօրմալ դրութիւնը տեսողական չէ կարող լինել, եւ կը տատանվի մինչեւ առաջիկայ ապրիլի ածուրդի օրերը:

Կ. Տ.-Յ.

ՆԱՄԱԿ ՂԱՐԱՍՈՒԹԱԶԱՐԻՑ

Մարտի 30-ին

Արդէն երկրորդ տարին է, որ տեղին հայոց ուսումնարանին հոգաբարձութիւնը ուսումնարանին կից բացել է կար ու ձեւի դպրոց, որտեղ հայ աշակերտուհիները, ուսումնարանի քառամեայ դասընթացը աւարտելուց յետոյ, կրթե տարվայ ընթացքում սովորում են կար ու ձեւ, չքաւորները՝ ձրի, իսկ միջոց ունեցողները՝ ջնջիկ վճարով:

Դպրոցի հոգաբարձութիւնը, որ հասարակութեան կողմից կոչված է դպրոցը կառավարելու, ինքը չէ դպրոցը կառավարողը, այլ հրաւիրել է մասնաւոր, հասարակութիւնից չընտրված անձանց եւ, տալով նրանց լրագոր իրաւունքներ, դպրոցի կառավարութեան գործը բոլորովին նրանց է յանձնել:

«Россия» լրագրին հետագրում են կրկնել, թէ «Жизнь и Искусство» լրագրը աճուրդի ժամանակ 400 բուրդով գնել են գնդապետ Լուրիսովի և «Киевское Слово»-ի նախկին խմբագիր Մուրոմցևի: Հրատարակչի պարտքերը ընդհանուր գումարը 100,000 բուրդուց աւելի էր:

ԶԱՔԱՍԹԱՆՈՅԻՑ մեզ գրում են. «Երկար երաշխիք յետոյ, երէկ, ապրիլի 12-ին, կէսօր-վայ դէմ երկինքը սկսեց ամպել, որին անձկութեամբ սպասող սրտերը, ուրախութեան ժպիւտ երեւաներին, գոհութիւն էին մատուցանում: Աստուծու Բայց աւագ, այդ ուրախութիւնը տոմ փոխվեց յուսահատութեան, լայնի եւ արտասուքի. սկսեց տեղալ անսպասելի կարկուտ, որի նմանը զեռ չէր տեսնված. պողպատե ծառերը, խաղողի վազերը բոլորովին մերկացան տերեւներից: Վնասը ահագին է. կարկուտը տեսնեց 35 րոպէ եւ կշռում էր 3-ից-14 միլիար: Գետինը ծածկվեց սպիտակ սաւանով, որի հատուկութիւնը հասնում էր 6 վերջօրի: ցրտից այրված թիթեան տերեւների մնացորդն էլ կարկուտին զոհ եղաւ: Շրջակայ գիւղերից հասնող լուրերը աղեկատու են. վարքը իսպառ փչացել են: Գիւղացիք յուսահատութեան մէջ են»:

ԴՐՁԼ-ԱՐՈՒՍՏԻՑ մեզ գրում են. «Տառն տարուց աւել է արդէն, որ Դրզլ-Արուստի հայ վաճառականները կամենում էին կազմել մի ընկերութիւն վաճառականներից անխոր, բայց անկ Դրզլ-Արուստում մի պահեւտ եւ ընթել տալ զանազան գործարաններից իրանց անհրաժեշտ ապրանքները

ներ միայն չհնական ուստիական օլժեր են կանգնած, բայց ուրիշ որ եւ է զօրք այնտեղ չը կար:

Պէկին: «Մեծ Բուռնքի» զօրաբաժինը, թը-ւով հազար մարդ, գտնվում է 20 մղոն դէպի հարաւ Պատմաթուրքի: Ապստամբները անցեալ շաբաթ կողոպտեցին երեք դիւղ եւ սպանում էին սրի անցկացնել քրիստոնեաներին: Շատ քրիստոնեաներ ազատվեցին Պատմաթուրքում: «Մեծ Բուռնքի» ուրիշ աւազակախմբեր նոյն-պէս անկարգութիւններ են անում: Նրանց պարագլուխը դիտաւորութիւն յայտնեց յարձա-կունսն զօրծել Մանգուտէյն քաղաքի վրա, որ-տեղ գտնվում է 20 զերմանայինքից բաղկա-ցած պահակախումբը:

Պատմաթուրքում, որը կատարելապէս առանց զօրքերի է մնացել, շատ նշաններից երե-ւում է, թէ ազգաբնակչութեան կասկա-ծելի տարրերի մէջ տիրում է մեծ յուզումներ: Փորձված զիտողները կարծում են, որ չինա-ցիների աւելի վտանգաւոր դասը սպասում է միայն օտար զօրքերի հետանալուն, որպէս զի շարունակեալ անգլացի քրիստոնեաների ջնջումը:

Ալժիր: Մարգէրիտից պաշտօնապէս հա-ղորդում են, որ երկուշաբթի 11 ժամին կարգը վերականգնված էր: Սպանված են մէկ դաշ-տային պահապան, մէկ զինուոր, երկու կօլ-ոստ, երկու սպանիրացի, մէկ իտալացի, եր-կու օֆիցէր եւ մի քանի ժամգարմներ վիրա-ւորված են, երեք տեղացիներ սպանվեցին: Միջոցներ են ձեռք առնված հարեւան զիւղե-րի պաշտպանութեան համար:

ՊԵՏԵՐԲ